



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araq.s.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 267-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «ՀԾ-Հաշվապահ 7» համակարգի ձեռքբերման և սպասարկման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4241 հոդվածից հատկացնել 117.000 (հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 5132 հոդվածից հատկացնել 504.000 (հինգ հարյուր չորս հազար) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 05
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araq.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 266-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում գտնվող Ասյա Ժորայի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող 04-023-0010-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Արտիմետ, 6-րդ փողոց, 40 հասցե:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 05
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqh.amaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 265-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ավագ Ավագյան Գագաիկի» ԱՁ /վկայական N 0331/ կողմից կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 04-033-0103-0009 կադաստրային ծածկագրով անշարժ գույքից առանձնացված 0.1 հա մակերեսով մասին տրամադրել ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Գայ, Մ. Սարյան 6-րդ փողոց, 11/1 հասցե, 0.0854 հա մակերեսով մասին տրամադրել ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Գայ, Մ. Սարյան 6-րդ փողոց, 11 հասցե:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



2024թ. մարտի 05
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araq.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 264-Ա

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՐԱՌԱՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 161-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 18.1-րդ կետը և Վանուշ Հայրապետյանի 2024 թվականի մարտի 5-ի դիմումը.

Որոշում եմ՝

- Արաքս համայնքի Զրառատ գյուղի վարչական ղեկավար Վանուշ Հայրապետյանին տրամադրել 2023 թվականի ամենամյա արձակուրդի մնացած մասը՝ 9/ինը/ աշխատանքային օր տևողությամբ և 2024 թվականի ամենամյա արձակուրդի մի մասը 3/երեք/ աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի մարտի 6-ից մարտի 22-ը ներառյալ:
- Զրառատ գյուղի վարչական ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարող նշանակել Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Սարգիս Նահապետյանին:
- Վանուշ Հայրապետյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի մարտի 25-ից:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 05
Արաքս համայնք





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqh.amaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 263-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող Չինար Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-005-0056-0014 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ակնաշեն, 10-րդ փողոց, 31 հասցե:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 05

Արաքս համայնք





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araq.s.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 262-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող Նարեկ Տիգրանի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 04-012-0025-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ապագա, 5-րդ փողոց, 1 հասցե:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 05
Արաքս համայնք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 261-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի N933-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 13-ի «Բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու մասին» N933-Ա որոշման 1-ին և 3-րդ կետերում կատարել հետևյալ փոփոխությունները.

««Գրիբոյեդով գյուղի Նարեկացու փողոց 23 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հերմինե Հմայակի Ասլանյանի /ծնվ. 1973թ./, Արայիկ Հմայակի Ասլանյանի /ծնվ. 1976թ./, Արթուր Ավետիսի Բաղդասարյանի /ծնվ. 1990թ./» բառերը փոխարինել «Գրիբոյեդով գյուղի Նարեկացու փողոց 23 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հերմինե Հմայակի Ասլանյանի /ծնվ. 1973թ./, Արայիկ Հմայակի Ասլանյանի /ծնվ. 1976թ./, Արթուր Ավետիսի Ասլանյանի /ծնվ. 1990թ./» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024թ. մարտի 05
Արաքս համայնք

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araq.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մարտի 2024 թվականի N 260-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիդրոերկրաբանական տեղեկատվության և անձնագրի կազմման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 1.6.1-ի (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) 4241 հոդվածից հատկացնել 323.600 (երեք հարյուր քսաներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 05

Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 arqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2024 թվականի N 259-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՅ
ԳՅՈՒՂԻ << ԳԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26.02.2020թ. թիվ 02-Ն հրամանը և 04.03.2024թ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի <<Գայի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեխնիկական տեխնոլոգիաների բաժնի պետ՝ Մարիա Ազատյանին, որը պարտավորվում է մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրել և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրել նիստերի արձանագրությունները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 04
Արաքս համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ղեկավարի
04 փետրվարի 2024թ.-ի
N 259-Ա որոշմամբ

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱԳԱ ԳՅՈՒՂԻ
<<ՎԱՀԱԳՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀՀ	Ազգանուն, անուն	Զբաղեցրած պաշտոնը	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1	Լիաննա Ռուբենի Հարությունյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
2	Արշակ Ռաֆիկի Ղորղանյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
3	Պետրոս Արամայիսի Ավագյան	Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ	Արաքսի համայնքապետարան
4	Շահեն Էդիկի Շահինյան	Ավագանի	Արաքս համայնքի ավագանի
5	Ասյա Իմատրայի Խաչատրյան	Արաքս համայնքի Գայ գյուղի դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն	Գիտական և ուսումնական հաստատության ներկայացուցիչ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqh.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2024 թվականի N 258-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱԳԱ
ԳՅՈՒՂԻ << ՎԱՀԱԳՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՇԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ >> ՀՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26.02.2020թ. թիվ 02-Ն հրամանը և 4.03.2024թ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

Որոշում եմ՝

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի << Վահագն Մարգարյանի անվան մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
- Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեխնիկական տեխնոլոգիաների բաժնի պետ՝ Մարիա Ազատյանին, որը պարտավորվում է մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրել և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրել նիստերի արձանագրությունները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 04

Արաքս համայնք



Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ղեկավարի
04 փետրվարի 2024թ.-ի
N 258-Ա որոշմամբ

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱԳԱ ԳՅՈՒՂԻ
<<ՎԱՀԱԳՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀՀ	Ազգանուն, անուն	Զբաղեցրած պաշտոնը	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1	Լիաննա Ռուբենի Հարությունյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
2	Արշակ Ռաֆիկի Ղորղանյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
3	Պետրոս Արամայիսի Ավագյան	Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ	Արաքսի համայնքապետարան
4	Շահեն Էդիկի Շահինյան	Ավագանի	Արաքս համայնքի ավագանի
5	Ասյա Իմատրայի Խաչատրյան	Արաքս համայնքի Գայ գյուղի դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն	Գիտական և ուսումնական հաստատության ներկայացուցիչ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2024 թվականի N 257-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում գտնվող Շուշանիկ Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող 04-050-0040-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Խորոնք, Վ. Վարդանյան փողոց, 34 հասցե:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



2024թ. մարտի 04

Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araq.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2024 թվականի N 256-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի սեփականությունը հանդիսացող 0.00126 հա հողամասի ծածկագիր՝ 04-035-0154-0218 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 04
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 arqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 մարտի 2024 թվականի N 255-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի սեփականությունը հանդիսացող 0.008 հա հողամասի ծածկագիր՝ 04-035-0154-0218 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 04
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araq.s.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 մարտի 2024 թվականի N 254-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Արաքս համայնքի Զրառատ գյուղի սեփականությունը հանդիսացող 0.12 հա հողամասի ծածկագիր՝ 04-085-0062-0002, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 20.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 26.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



2024թ. մարտի 01
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqh.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 մարտի 2024 թվականի N 253-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 04-085-0237-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ջրառատ, Արաքսի խճուղի, 12/1 հասցե:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 01
Արաքս համայնք





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araq.s.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 փետրվարի 2024 թվականի N 252-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի «ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 16-ի «Հավելավճար սահմանելու մասին» N 169-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ կետում «Գրիգորի Մարտիրոսյան» բառերը փոխարինել «Մարտիրոսի Մովսիսյան» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. փետրվարի 29
Արաքս համայնք





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 arags.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 փետրվարի 2024 թվականի N 251-Ա

**ԱՇՈՏ ԳՎԻԴՈՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերով, 9-րդ հոդվածի 15-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 10-րդ մասով, հիմք ընդունելով Աշոտ Գվիդոնի Հովհաննիսյանի 2024 թվականի փետրվարի 29-ի դիմումը.

Որոշում եմ՝

- Աշոտ Գվիդոնի Հովհաննիսյանին 2024 թվականի մարտի 1-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի օգնականի պաշտոնում:
- Աշխատավարձը սահմանել ըստ Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 176-Ա որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածի:
- Աշխատանքային պարտականությունները սահմանել համաձայն Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 10-ի թիվ 05-Ա որոշման:
- Սույն որոշումից բխող իրավահարաբերությունները ամրագրել աշխատանքային պայմանագրով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործողության մեջ է դրվում 2024 թվականի մարտի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. փետրվարի 29

Արաքս համայնք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 փետրվարի 2024 թվականի N 250-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԻՆ ԴԱՍՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի գ) և դ) կետերի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի <<Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին>> N 1180-Ն որոշման 14-րդ և 15-րդ կետերի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վտանգավոր և քաղաքացիական պաշտպանության խմբին դասվող տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման համայնքային պլանը՝ իր հավելվածներով.

ա. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի տարահանման հանձնաժողովի ազդարարման սխեման՝ համաձայն N^o 1 հավելվածի.

բ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի սահմանամերձ 10 կիլոմետրանոց գոտուց տարահանված բնակչության ժամանակավոր տեղակայման կետերի և բնակչության տեղաբաշխման հաշվարկն ըստ բնակավայրերի՝ համաձայն N^o 2 հավելվածի.

գ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ՀԱԷԿԻ 10 կիլոմետրանոց գոտուց տարահանված բնակչության ժամանակավոր տեղակայման կետերի և բնակչության տեղաբաշխման հաշվարկն ըստ բնակավայրերի՝ համաձայն պլանի N 3 հավելվածի.

դ. Ապարանի և Ախուրյանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում Արաքս համայնքի բնակչության տարահանման և ընդունման ժամանակացույցն ըստ բնակավայրերի՝ համաձայն N^o 4 հավելվածի.

ե. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի սահմանամերձ 10 կիլոմետրանոց գոտուց տարահանված բնակչությանը սննդամթերքով ապահովման հաշվարկը՝ համաձայն №5 հավելվածի.

զ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի սահմանամերձ 10 կիլոմետրանոց գոտուց տարահանված բնակչության անհրաժեշտ հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքների հաշվարկը՝ համաձայն № 6 հավելվածի.

է. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքում տեղադրված ազդարարման սարքավորումների առկայության մասին տեղեկությունները՝ համաձայն № 7 հավելվածի.

ը. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքում առկա տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն № 8 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ Արաքս համայնքի վտանգավոր և քաղաքացիական պաշտպանության խմբին դասվող տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման համայնքային պլանի մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիր մարզային փրկարարարական վարչություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. փետրվարի 29

Արաքս համայնք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 arags.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 փետրվարի 2024 թվականի N 249-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ(ԸՆԴՈՒՆՄԱՆ) ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԿԵՏԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի № 218-Ա որոշումը, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի <<Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին>> N 1180-Ն որոշման 30-րդ, 31-րդ, 34-րդ, 39-րդ, 42-րդ և 46-րդ կետերի, ինչպես նաև համայնքի բնակավայրերում արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանավորման, նախապատրաստման և անցկացման ապահովումն իրականացնելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի բնակչության տարահանման Հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Արաքս համայնքի Հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Ստեղծել Հանձնաժողովի կազմում օպերատիվ խմբեր՝ համաձայն հավելված 3-ի:
4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի տարահանման հանձնաժողովի նախագահին՝
 - 1) լրամշակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման պլանը և մինչև 2024 թվականի մարտի 1-ը ներկայացնել Արաքս համայնքի ղեկավարի հաստատմանը,
 - 2) համագործակցելով փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ, որոշել համայնքի տարահանման (ընդունման)

հավաքակայանների տեղակայման վայրերը, առաջարկել համայնքի տարածքում գործող անկախ կազմակերպական-իրավական ձևից ուսումնական հաստատությունների ու հասարակական նշանակության կազմակերպությունների ղեկավարներին՝

1) կազմակերպությունների տարածքում ստեղծել՝

ա. տարահանման (ընդունման) հավաքակայաններ.

բ. ժամանակավոր տեղակայման կետեր.

գ. երկարատև բնակության կետեր.

դ. օբյեկտային տարահանման հանձնաժողովներ.

2) ձևավորել տարահանման (ընդունման) հավաքակայանների աշխատակազմը, հաստատել հաստիքացուցակը և աշխատանքային խմբերի կազմերը, մշակել տարահանման (ընդունման) հավաքակայանների կանոնադրությունները, ղեկավարման մարմինների և աշխատանքային խմբերի անձնակազմերի պարտականությունները և դրանց հաստատման վերաբերյալ եռամսյա ժամկետում ընդունել համապատասխան հրամաններ կամ որոշումներ:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, տարահանման հանձնաժողովի նախագահ Վահրամ Հարությունյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. փետրվարի 29

Արաքս համայնք





Կ Ա Ձ Մ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Պետրոս Ավագյան - հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ

Ավետիք Սենիքերիմյան - հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ

Վարսենիկ Վարդանյան - հանձնաժողովի քարտուղար՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար:

Հանձնաժողովի անդամներ՝

Արա Նավասարդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի խորհրդական

Միսակ Միսակյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի օգնական

Մարինե Թեմուրյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /սոցիալական աշխատող/

Շանթ Ավդալյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ

Մարիա Ազատյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ /տնտեսական զարգացման պատասխանատու/

Կարեն Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ

Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի ծառայության խմբի ներկայացուցիչ:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆ



Կանոնադրություն

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի տարահանման Հանձնաժողովի կանոնադրությունը սահմանում է Արաքս համայնքի տարահանման հանձնաժողովի ստեղծման կարգը, կազմը և հիմնական խնդիրները խաղաղ պայմաններում, ԱԻ ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ:

2. Հանձնաժողովը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի որոշմամբ, որպես մշտական գործող տարահանման մարմին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ տարածքներ տարահանման միջոցառումների նախօրոք պլանավորման, տարահանման մարմինների ստեղծման ու նախապատրաստման և տարահանման միջոցառումների անցկացման ու բազմակողմանի ապահովման նպատակով:

3. Հանձնաժողովի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Արաքս համայնքի ղեկավարը: Հանձնաժողովի անմիջական ղեկավարումը դրվում է Արաքս համայնքի ղեկավարի տեղակալի՝ տարահանման հանձնաժողովի նախագահի վրա:

4. Հանձնաժողովն աշխատում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարահանման հանձնաժողովի հետ համագործակցությամբ, որն իրականացնում է նրա գործունեության կազմակերպա-մեթոդական ապահովումը:

5. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, այլ նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնադրությամբ:

II. Հանձնաժողովի հիմնական խնդիրները

6. Խաղաղ ժամանակ՝

1) փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ համատեղ ռազմական դրության ժամանակ և ԱԻ ծագման ու սպառնալիքի դեպքում բնակչության տարահանման պլանի մշակում և տարին մեկ անգամ ճշգրտում;

- 2) համայնքի տարահանման մարմինների ստեղծման, համալրման և նախապատրաստման կազմակերպում;
- 3) անվտանգ գոտում տարահանվող բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման վայրերի ընտրում;
- 4) համայնքի տարահանման պլանների, ինչպես նաև տարահանվող բնակչության անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման, առաջնահերթ կենսաապահովման պլանների մշակման ընթացքի կազմակերպում;
- 5) մասնակցություն տարահանման մարմինների տարահանման միջոցառումների անցկացման պատրաստականության ստուգմանը: Նիստերի պարբերաբար անցկացում ստուգման արդյունքների վերլուծման համար;
- 6) զինվորական հրամանատարության հետ փոխհամագործակցության կազմակերպումը՝ տարահանման միջոցառումների պլանավորման, ապահովման և անցկացման հարցերով;
- 7) մասնակցություն քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով ուսումնավարժություններին՝ մշակված տարահանման փաստաթղթերի իրականության ստուգման և տարահանման միջոցառումների կազմակերպման և անցկացման հարցերով գործնական հմտությունների ձեռքբերման նպատակով;
- 8) բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման նախապատրաստման կազմակերպում, տարահանման փաստաթղթերի մշակում և հաշվառում:

7. ՔՊ համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրելու դեպքում՝

- 1) կառավարման, կապի և ազդարարման համակարգերի պատրաստականության բերման, ինչպես նաև տարահանման մարմինների ծավալման կազմակերպում;
- 2) տարահանվող բնակչության թվաքանակի և կարգի ճշգրտում, տարահանման պլանների, տարահանման բոլոր տեսակների ապահովման իրականացման և կարգի ճշգրտում
- 3) բժշկական հաստատությունների, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտի դուրս բերման նախապատրաստման կազմակերպում;
- 4) վտանգավոր գոտուց, ինչպես նաև տարահանման միջանկյալ կետերից բնակչության դուրս բերման և անվտանգ վայրերում տեղաբաշխման համար հատկացված տրանսպորտային միջոցների նախապատրաստման կազմակերպում;
- 5) առկա պաշտպանական կառույցների պատրաստականության բերման կազմակերպում;
- 6) տարահանման հանձնաժողովի հետ անվտանգ գոտում ընդունման, տեղաբաշխման և բնակչության առաջնահերթ կենսաապահովման պլանների ճշգրտում:

8. Տարահանման անցկացման կարգադրություն ստանալիս՝

- 1) տարահանման մարմինների կողմից ժամանակին ազդարարման, հավաքի և տարահանված բնակչությանը անվտանգ վայրեր տեղափոխելու աշխատանքների կազմակերպում;
- 2) տարահանման միջոցառումների բազմակողմանի ապահովման, ընդունման, բաշխման և անվտանգ գոտում տարահանված բնակչության առաջնահերթ կենսաապահովման աշխատանքների կազմակերպում;
- 3) հարևան մարզերի հետ փոխգործողությունների կազմակերպում՝ նրանց տարածքներում տարահանված բնակչության ընդունման և բաշխման հարցերով
- 4) տարահանման միջոցառումների անցկացման և ապահովման համար տարահանման մարմիններին անհրաժեշտ օգնության ցուցաբերում
- 5) տարահանման պլանի կատարման, տարահանման պլանի ճշգրտման ուղղությամբ առաջարկությունների մշակման կազմակերպում;
- 6) բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման մասին տվյալների հավաք և ամփոփում, դրա մասին զեկուցում մարզպետին:

9. Խաղաղ ժամանակ բնական և տեխնածին բնույթի ԱԻ ծագման սպառնալիքի դեպքում՝

- 1) տարահանվող բնակչության ընդունման և տեղաբաշխման պլանավորում;
- 2) կապի և ազդարարման համակարգերի պատրաստության ստուգում;
- 3) տարահանման ենթակա բնակչության թվաքանակի ճշտում;
- 4) տարահանման մարմինների ծավալման պատրաստության բերում;
- 5) տարահանման միջոցառումների ապահովման համար տրանսպորտի պատրաստության կազմակերպում;
- 6) առկա պաշտպանական կառույցների պատրաստության կազմակերպում;
- 7) անվտանգ վայրերում, ժամանակավոր տեղակայման կետերում տեղաբաշխման վայրերի պատրաստության հսկողություն:

10. Տարահանման անցկացման կարգադրություն ստանալիս՝

- 1) տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում կառավարման և կապի կազմակերպում;
- 2) տրանսպորտային ապահովման կազմակերպում;
- 3) չափաբաժնական (дозиметрический) հսկողության, բնակչության սանիտարական մշակման, տեխնիկայի և հագուստի հատուկ մշակման (անհրաժեշտության դեպքում) կազմակերպում;
- 4) տարահանվող բնակչության ընդունման, հաշվառման և տեղաբաշխման վայրեր տեղափոխման կազմակերպում;
- 5) բնակչության առաջնահերթ կենսաապահովման կազմակերպում:

III. Հանձնաժողովի իրավունքները

11. Հանձնաժողովն իրավունք ունի՝

- 1) Իր իրավասությունների շրջանակներում ընդունելու որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման կազմակերպությունների, հաստատությունների և ձեռնարկությունների համար՝ կապված տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման հետ:
- 2) Հարցում անել կազմակերպություններից, հաստատություններից անհրաժեշտ տվյալների մասին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման հարցերի ուսումնասիրման և որոշումների ընդունման համար:
- 3) Տարահանման միջոցառումների ապահովման հարցերով ունկնդրել կազմակերպությունների, հաստատությունների պաշտոնատար անձանց, սահմանված կարգով անցկացնել խորհրդակցություն տարահանման մարմինների ներկայացուցիչների հետ:
- 4) Տարահանման մարմինների գործունեության վրա սահմանել հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման կազմակերպման հարցերով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության մասնագետների ներգրավմամբ:

IV. Հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքը

12. Հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքում ընդգրկվում են՝

- 1) տարահանման հանձնաժողովի ղեկավարությունը;
 - 2) վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբը;
 - 3) անվտանգ տարածքում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբը;
 - 4) տրանսպորտային ապահովման խումբը;
 - 5) հիվանդանոցի անձնակազմի և հիվանդների անվտանգ դուրս բերման հաշվառման խումբը;
 - 6) սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբը:
13. Հանձնաժողովի կազմում նշանակվում են տեղական ինքնակառավարման մարմինների, տարահանման միջոցառումների ապահովմանը մասնակցող կապ ապահովող կազմակերպության, տնտեսության օբյեկտների պաշտոնատար անձինք՝ բացառությամբ զորահավաքային կարգադրագիր ունեցող անձանց:

V. Հանձնաժողովի աշխատանքային կարգը

14. Հանձնաժողովի նախագահը կրում է անձնական պատասխանատվություն խաղաղ ժամանակ, արտակարգ իրավիճակների ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ տարահանման հանձնաժողովի վրա դրված խնդիրների կատարման համար:

15. Հանձնաժողովի աշխատանքը իրականացվում է տարեկան աշխատանքային պլանով: Հանձնաժողովի աշխատանքային պլանը մշակվում է Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ համագործակցելով փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՇՄՓՎ) հետ, և հաստատվում է Հանձնաժողովի նախագահի կողմից:

16. Հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են Հանձնաժողովի արձանագրություններով և ստորագրվում Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

17. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ՝ Հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ: Հանձնաժողովի նիստերը և արձանագրությունների նախագծերը պատրաստում է Հանձնաժողովի աշխատանքային խումբը:

18. Հանձնաժողովի առանձին պլանային և արտապլանային նիստերը կարող է անցկացնել Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

19. Հանձնաժողովի անդամների աշխատատեղեր (հավաքի հաստատված վայրեր) ժամանելու համար սահմանվում են ժամկետները.

1) աշխատանքային ժամին՝ 30 րոպե

2) ոչ աշխատանքային ժամին՝ 1 ժամ 30 րոպե (ծմեռային ժամանակ՝ 2 ժամ)

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԱՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



[Handwritten signature]

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՑՈՒՑԱԿ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՕՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԵՐԻ

1. Տարահանվող բնակչության հավաքի, հաշվառման և տրանսպորտային միջոցներ նստեցման խումբ.

Խմբի ղեկավար՝

Արման Ղուկասյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ

Խմբի անդամներ՝

Հրանուշ Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ

Նարինե Դավթյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի խորհրդական

2. Տարահանման ենթակա նյութական և մշակութային արժեքների հաշվառման ու բարձման կազմակերպման խումբ.

Խմբի ղեկավար՝

Անդրանիկ Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ

Խմբի անդամներ՝

Շուշանիկ Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջին կարգի մասնագետ

Արամայիս Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի

առաջի կարգի մասնագետ

3.Տարահանման երթուղիներում տարահանման էջելոնների, ավտոշարասյունների կազմավորումների ուղեկցող խումբ

Խմբի ղեկավար՝

Սարգիս Նահապետյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ

Խմբի անդամներ՝

Հայկ Հովսեփյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի երկրորդ կարգի մասնագետ

Նաիրա Գալոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 փետրվարի 2024 թվականի N 248-Ա

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզի, Արաքս համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզի, Արաքս համայնքի.
 - 1) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
 - 2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. փետրվարի 29
Արաքս համայնք



ԿԱԶՄ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Ղազար Ղազարյան /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատասպարման պատասխանատու՝ Վահրամ Հարությունյան /համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Վարսենիկ Վարդանյան /աշխատակազմի քարտուղար/,

4. խորհրդի անդամներ՝

- 1) ավագանի Շահեն Շահինյան,
- 2) ավագանի Արմեն Առաքելյան,
- 3) բնակավայրի վարչական ղեկավարներ՝
 - ա. Արաքս բնակավայրի վարչական ղեկավար՝ Վարդան Գրիգորյան,
 - բ. Ակնաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Արսեն Հովսեփյան,
 - գ. Ապագա բնակավայրի վարչական ղեկավար՝ Երեմ Պողոսյան,
 - դ. Առատաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Նորիկ Տերտերյան,
 - ե. Արտիմետ բնակավայրի վարչական ղեկավար՝ Հենրիկ Միրզախանյան,
 - զ. Արմավիր բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռաֆիկ Մարգարյան,
 - է. Գայ բնակավայրի պատասխանատու՝ Արա Նավասարդյան,
 - ը. Գրիբոյեդով բնակավայրի վարչական ղեկավար՝ Վահե Գրիգորյան,
 - թ. Հայկաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Հմայակ Սարոյան,
 - ժ. Ջրարբի բնակավայրի վարչական ղեկավարի ժ/պ՝ Վարսենիկ Վարդանյան,
 - ի. Ջրառատ բնակավայրի վարչական ղեկավար՝ Վանուշ Հայրապետյան,
 - լ. Խորոնք բնակավայրի վարչական ղեկավար՝ Սերյոժա Ամիրյան,
 - խ. Մեծամոր բնակավայրի վարչական ղեկավար՝ Հասմիկ Հովսեփյան,
 - ծ. Լուսազյուղ բնակավայրի վարչական ղեկավար՝ Սարիբեկ Կարապետյան,

4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների
պատասխանատու՝ Հ. Մարգարյան /Արմավիրի հրշեջ-փրկարարական ջոկատի
հրամանատար/ (համաձայնությամբ),

բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Ա.Վ.Ոսկանյան /ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ , ոստիկանության փոխգնդապետ / (համաձայնությամբ),

գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ « Արաքս համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ/տնօրեն (համաձայնությամբ),

դ. կապի պատասխանատու/«VIVAMTS» ՓԲԸ-ի ղեկավար կամ տեղամասի ճարտարագետ / (համաձայնությամբ),

ե. բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Անահիտ Մկրտչյան / «Գայ բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրեն / (համաձայնությամբ),

զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Սարգիս Նահապետյան - / համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ /,

է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Ռ.Լևոնյան / «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Մուսալեռ» մ/ճ տնօրեն / (համաձայնությամբ),

ը. ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Ավետիք Սենիքերիմյան - / համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ /,

թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հողարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Միսակ Միսակյան -- / համայնքի ղեկավարի օգնական /,

ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվ՝ Մարինե Թեմուրյան - / համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ / սոցիալական աշխատող /:

ԱՇԽԱՏԱՎԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.
 - 1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Արաքս համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:
 - 2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Արաքսի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:
 - 3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:
 - 4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:
 - 5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:
 - 6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:
1. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝
 - 1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,
 - 2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,
 - 3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,
 - 4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,
 - 5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

- 6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,
 - 7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,
 - 8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,
 - 9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,
 - 10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,
 - 11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,
 - 12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,
 - 13) վարժանքների կազմակերպումը և անցկացումը
 - 14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:
2. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝
- 1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,
 - 2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,
 - 3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,
 - 4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,
 - 5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,
 - 6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,
 - 7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,
 - 8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,
 - 9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,
 - 10) առաջին օգնության իրականացման ապահովումը,
 - 11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,
 - 12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

- 13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,
- 14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,
- 15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,
- 16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,
- 17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,
- 18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,
- 19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,
- 20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 փետրվարի 2024 թվականի N 247-Ա

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

